

Canon



Zoemini S2

Վայրկենական տեսախցիկով տպիչ
Օգտվողի ձեռնարկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Ընթերցեք նախքան օգտագործելը

Էջ 3-4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաթեթում ներառված տարրեր
Ապրանքի առանձնահատկությունները

Էջ 5

ՏԵՂԱԿԱՅՈՒՄ

Լիցքավորում
Թղթի լիցքավորումը
Արտաքին հիշողություն

Էջ 6-9

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հոսանքի ՄԻԱՑՈՒՄ/ԱՆՋԱՏՈՒՄ
Լուսանկարում և լուսանկարի տպում
Դիտան
Սելֆիի հայելի
Լուսանկարելու ռեժիմներ
Չտիչ և շրջանակի կոճակներ
Ուղիղ լուսանկարում

Էջ 10-15

LED ՑՈՒՑԻՉ

Անսարքությունների շտկում

Էջ 16-18

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Էջ 19

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

Էջ 20-21

ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԻ ԵՎ ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏԵՍԱԽՑԻԿՈՎ ՏՊԻՉԻ ՉՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

Էջ 22-24

Android-ի և iOS-ի զուգավորումը
Չուգավորումը Android-ի հետ (NFC գործառնույթով)

ՕԳՏՎՈՂԻ ՄԻՋԵՐԵՍ

Էջ 25-38

Գլխավոր էկրան
Հիմնական ընտրացանկ
Տպիչի կարգավորումներ
Լուսանկարների այբում
Լուսանկարի ուղարկումը Mini Print հավելվածին
Լուսանկարի խմբագրում
Խճանկարի տպում գործառնույթի օգտագործումը
Կոլաժային տպում գործառնույթի օգտագործումը
Նախակտրված կաշուկի տպում
Սմարթֆոնի տեսախցիկ
Ինչպես տպել Zoemini S2 MicroSD քարտից
Տպման հերթագրում

ԸՆԹԵՐՑԵՔ ՆԱԽՔԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

Սարքն օգտագործելուց առաջ կարդացեք հետևյալ հրահանգները և անվտանգության ապահովման նախագրուշացումները:

Կանոնակարգող և անվտանգության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Կանոնակարգումների և երաշխիքի տեղեկատվական թերթիկը, որը ներառված է փաթեթի մեջ:






RMN` PP2002

Կանոնակարգիչ պահանջների հետ համապատասխանությունը նույնականացնող մոդելային համարը (RMN) հատկացվում է կանոնակարգիչ նույնականացում կատարելու նպատակով:



ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Օգտագործվում է պոտենցիալ վտանգավոր իրավիճակը ցույց տալու համար, որը կարող է չխուսափելու դեպքում մահվան հանգեցնել կամ լուրջ մարմնական վնասվածք պատճառել:








- Զեռու պահեք երեխաներից և մանուկներից: Սարքավորումը սխալ օգտագործելու դեպքում կարող են առաջանալ խեղդամահության կամ դժբախտ պատահարների դեպքեր:
- Անմիջապես դադարեցրեք սարքի օգտագործումը, եթե նրանից ծուխ կամ տարօրինակ հոտ է գալիս, կամ այլ տարօրինակ բաներ են կատարվում:
- Մի նայեք արևին կամ պայծառ լույսին տեսածրի կամ ոսպնյակների միջոցով: Դրա պատճառով կարող են կուրություն կամ տեսողական այլ խնդիրներ առաջանալ:
- Լուսաբռնկումը աչքերին մոտ մի պահեք: Դա կարող է վնասել աչքերը:
- Ձեռքի կապը երեխայի պարանոցին փաթաթվելու դեպքում կարող է խեղդամահ անել նրան: Եթե ձեր սարքավորումը հոսանքի լարով է, և եթե այն պատահամաբ փաթաթվի երեխայի պարանոցին, կարող է խեղդամահ անել նրան:
- Անջատեք սարքն այնպիսի վայրերում, որտեղ տեսախցիկի օգտագործումն արգելված է: Տեսախցիկի արձակած էլեկտրամագնիսական ալիքները կարող են խանգարել էլեկտրոնային սարքավորումների և այլ սարքերի աշխատանքին: Չգուշացեք սարքավորումը օդանավերի մեջ, բժշկական հաստատություններում և այլ տեղերում օգտագործելիս, որտեղ էլեկտրոնային սարքերի օգտագործումն արգելված է:



ԶԳՈՒՇԱՅՈՒՄ


Օգտագործվում է վտանգի կամ վնասի մակարդակը ցույց տալու համար, որը սարքի սխալ օգտագործման դեպքում կարող է մարմնական վնասվածք կամ գույքային վնաս պատճառել, ինչը չի դիտվում որպես ապրանքի թերություն:



- Ծայրահեղ եղանակային պայմաններում սարքը կարող է չտպել: Նախքան նորից տպել փորձելը թողեք, որ տափչի ջերմաստիճանը կարգավորվի և համապատասխանի հանձնարարելի աշխատանքային ջերմաստիճանին՝ 15°-ից 32°C:
- Խորհուրդ է տրվում սարքի լիցքավորումը կատարել 15°-ից 32°C ջերմաստիճանային պայմաններում:
- Սարքը մաքրեք փափուկ, չոր շորով: Մի մաքրեք խոնավ շորով կամ շուտ գոլորշացող հեղուկներով, օրինակ, ներկի նոսրացուցիչով:
- Փակ պահեք վերին կափարիչը, որպեսզի փոշի ու այլ մասնիկներ չներթափանցեն սարքի մեջ:
- Եթե սարքը ճիշտ չի աշխատում, դիմեք ձեր ներկայացուցչին, որից գնել եք այս ապրանքը կամ Canon-ի սպասարկման և աջակցման կենտրոնին՝ www.canon-europe.com/support հղումով:
- Երբեք չպահեք մարտկոցը բարձր ջերմաստիճանում, անմիջապես տաքացուցիչի կողքին կամ չոչնչացնեք այրման միջոցով:
- Էլեկտրամագնիսական միջամտության կամ Էլեկտրաստատիկ լիցքաթափման պատճառով սարքը կարող է խափանվել, կամ կարող է առաջանալ հիշողության կորուստ կամ փոփոխում: Նման բան տեղի ունենալու դեպքում գնդասեղի կամ նմանատիպ առարկայի օգնությամբ սեղմեք սարքի ներքևի մասում գտնվող [ՎԵՐԱԿԱՅԵԼ] կոճակը:
- Սարքի չարտոնված փոփոխություններ մի՛ կատարեք: Այդպես կարող է խախտվել անվտանգությունը, կանոնակարգիչ պահանջների հետ համապատասխանությունը և արտադրողականությունը, ինչը կարող է անվավեր դարձնել գործող երաշխիքը:
- Մարտկոցը մի՛ փոխարինեք սխալ տեսակի մարտկոցով:
- Մի՛ կազմաքանդեք, բացեք կամ կտրտեք մարտկոցի բլոկը կամ բջիջները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱԹԵԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԱՐՐԵՐ



Վայրկենական տեսախցիկով տպիչ




Արագ մեկնարկի ուղեցույց



Կանոնակարգումների և երաշխիքի տեղեկատվական թերթիկ



CANON ZINK®
Լուսանկարների թուղթ (10 թերթ)




USB մալուխ




Ձեռքի կապ

ԱՊՐԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱԶՆԱԿՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



- | | |
|--|---|
| <p>1 Տեսախցիկի ոսպնյակ</p> <p>2 Սելֆիի հայելի</p> <p>3 Օղակաձև դասավորված լույս (8 LED լույս)</p> <p>4 Տպելու արտաձման բնիկ</p> <p>5 Ձեռքի կապի ամրոցակ</p> <p>6 Կարգավիճակի LED լույս</p> <p>7 Շարժական անջատիչ</p> <p>8 Հոսանքի կոճակ</p> <p>9 Փականակի կոճակ</p> <p>10 Լուսաբռնկում</p> | <p>11 Դիտան</p> <p>12 Շրջանակի կոճակ</p> <p>13 Ձտիչի կոճակ</p> <p>14 Բարձրախոս</p> <p>15 Վերակայման կոճակ * Սարքը վերակայելու համար սեղմեք գնդաստղով</p> <p>16 microSD հիշողության քարտի բնիկ (մինչև 256 ԳԲ)</p> <p>17 Լիցքավորման կարգավիճակի LED լույս</p> <p>18 Փոքր USB միացք</p> <p>19 Տպիչի կափարիչ</p> |
|--|---|

ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ



Լիցքավորման կարգավիճակի LED լույս

Լիցքավորվում է՝ կարմիր



Ամբողջությամբ լիցքավորված է՝ կանաչ



Սարքն ունի ներկառուցված մարտկոց: Մինչ սարքն օգտագործելը այն ամբողջությամբ լիցքավորեք սարքի հետ տրամադրված USB մալուխի միջոցով:

- 1 Տրամադրված USB մալուխի փոքր ծայրը միացրեք սարքին, իսկ մյուս ծայրը՝ լիցքավորելի USB հարմարիչին:
- 2 Լիցքավորման LED լույսը կվառվի կարմիր՝ ցույց տալու, որ սարքը լիցքավորվում է:
- 3 Ամբողջությամբ լիցքավորվելուն պես LED լույսը կկանաչի:
 - Մարտկոցի աշխատանքի ժամանակը կարող է տատանվել՝ կախված մարտկոցի վիճակից, աշխատանքային վիճակից և միջավայրի պայմաններից:

* Եթե սարքն օգտագործելու պլաններ չունեք, նախքան այն առանց օգտագործման թողնելը խորհուրդ է տրվում մարտկոցն ամբողջությամբ լիցքավորել տարեկան մեկ անգամ՝ մարտկոցի պահպանումն ապահովելու համար: Եթե սարքի մարտկոցը երեք (3) ամսից ավելի թողնեք սպառվող լիցքավորմամբ, մարտկոցը կարող է փչանալ, և գուցե այլևս հնարավոր չլինի լիցքավորել ներկառուցված մարտկոցը:


! ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ USB ՄԱԼՈՒԽԻ ՄԱՍԻՆ


ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄ ՎԱՐՎԵՔ USB ՄԱԼՈՒԽԻ ՀԵՏ, ԵՐԲ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ ԵՔ

- Մալուխի վրա ծանր առարկաներ մի՛ դրեք:
- USB մալուխը ջերմությանը մոտ մի՛ դրեք:
- Մի՛ քերծեք, վնասեք, ոլորեք կամ ուժեղ մի՛ ձգեք մալուխը:
- Մալուխը մի՛ միացրեք կամ անջատեք հոսանքի վարդակից թաց ձեռքերով:
- Խոլասափեք խիստ բարձր/ցածր ջերմաստիճանային կամ խոնավ պայմաններից:
- Լիցքավորելուց հետո USB մալուխն անջատեք հոսանքի աղբյուրից:
- Լիցքավորման համար օգտագործեք տրամադրված USB մալուխը:

ԹՂԹԻ ԼԻՑԶԱՎՈՐՈՒՄԸ




- 1 Զեռացրեք կափարիչը՝ այն սահեցնելով առաջ՝ սլաքի ուղղությամբ:




- 2 Բացեք լուսանկարների թղթի մեկ փաթեթը (10 թուղթ + կապույտ SMART SHEET®-ը):


- 3 Լուսանկարների բոլոր տասը թղթերը և մեկ կապույտ SMART SHEET®-ը տեղադրեք լուսանկարների թղթի բաժնում:
– Լուսանկարների թղթերը դարսեք կապույտ SMART SHEET®-ի վրա՝ համոզվելով, որ գծակողը և լուսանկարների թղթերի տարբերանշանները դեպի ներքև են նայում:



- 4 Զեռ տեղադրեք կափարիչը սարքի վրա: Ճիշտ փակելու դեպքում այն պետք է կտտոցով տեղն ընկնի:
– Առաջին տպելուց առաջ կապույտ SMART SHEET®-ը ավտոմատ կանցնի սարքի միջով:

ԱՐՏԱՔԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ



 Նկարած լուսանկարները պահելու համար անհրաժեշտ է արտաքին MicroSD հիշողության քարտ (մինչև 256 ԳԲ):
Ընդունելի են միայն FAT16, FAT32 և exFAT ձևաչափերը:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Օգտագործեք հետևյալ հիշողության քարտերը (վաճառվում են առանձին)

- MicroSD հիշողության քարտեր *1
- MicroSDHC հիշողության քարտեր *1 *2
- MicroSDXC հիշողության քարտեր *1 *2

*1 Քարտեր, որոնք համապատասխանում են SD չափանիշներին: Սակայն ոչ բոլոր հիշողության քարտերի աշխատանքն է ստուգվել տեսախցիկի հետ:

*2 UHS-I հիշողության քարտերը նույնպես ընդունելի են:

MicroSD ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄԸ

- MicroSD քարտը գետնեղեք սարքի ներքևում գտնվող բնիկի մեջ: Երբ քարտն ամբողջությամբ մտնի, թեթևակի կտոնոց կլսեք:
- Այն հետ քաշելու համար սեղմեք քարտի վերևի մասին: Քարտը սարքից հանելու համար զգուշորեն քաշեք այն:
- Եթե MicroSD քարտի կարդալու կամ գրելու հետ կապված սխալի լինի, կցուցադրվի MicroSD քարտի սխալի LED ցուցումը: Հանեք MicroSD քարտը և վերագործարկեք սարքը:
- Սարքը միացրեք համակարգչին տրված՝ USB մալուխի միջոցով:
Լուսանկարները դիտելու և պահելու համար երկկտտացրեք արտաքին հիշասարքի պատկերին, երբ այն հայտնվում է համակարգչի էկրանին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

- Սարքն օգտագործեք և պահեք 15°-ից 32° C ջերմաստիճանի և 40-55% հարաբերական խոնավության հանձնարարելի պայմաններում:
- Մշտապես թարմացրեք սարքի ներկառուցված ծրագիրը: Սարքը կապակցեք Canon Mini Print հավելվածին: Ծրագրի նոր տարբերակի առկայության դեպքում ընտրացանկի գոտում կհայտնվի «Ներկառուցված ծրագրի նորացում» պատկերանշանը:
 - Նախքան ստուգելը համոզվեք, որ ձեր շարժական սարքը կապակցված է համացանցին: Ներկառուցված ծրագիրը թարմացնելու համար տպիչը պետք է լիցքավորված լինի առնվազն 50%-ով:
- Համոզվեք, որ օգտագործում եք Canon Mini Print հավելվածի վերջին տարբերակը: Եթե ձեր հավելվածներն ինքնաշխատորեն չեն թարմացվում, բացեք հավելվածների խանութը և ստուգեք՝ արդյոք պետք է թարմացնել:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԹՈՒՂԹ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ


- Լիցքավորեք միայն 10 թուղթը և 1 կապույտ SMART SHEET®-ը: Մի լիցքավորեք ավելին, քանի որ դա կարող է թղթի խցանում կամ տպման սխալներ առաջացնել:
- Տպման օպտիմալ արդյունք ստանալու համար օգտագործեք Canon Zoemini տպիչների համար նախատեսված լուսանկարների թուղթը:
 - Լրացուցիչ թուղթ կարող եք գնել Canon Mini Print հավելվածի միջոցով՝ հիմնական ընտրացանկում հայելով «Գնել թուղթ»:
- Թուղթը խցանվելու դեպքում պարզապես ԱՆՁԱՏԵՔ տպիչը և կրկին ՄԻԱՑՐԵՔ, որպեսզի խցանումն ավտոմատ կերպով բացվի: Մի փորձեք քաշելով հանել թուղթը:
- Տպելու ընթացքում մի ձգեք կամ քաշեք լուսանկարների թուղթը:
- Չգուշուղթամբ վարվեք լուսանկարների թղթի հետ, որպեսզի չվնասեք կամ չծալեք այն:
- Լիցքավորելիս աշխատեք չաղտոտել լուսանկարների թուղթը: Եթե լուսանկարների թուղթը աղտոտվի կամ վնասվի, կարող է խցանում կամ տպման սխալ առաջանալ:
- Լուսանկարների թղթի նոր փաթեթ բացեք այն դեպքում, եթե պատրաստ եք լիցքավորել այն սարքի մեջ:
- Լուսանկարների թուղթը մի դրեք արևի անմիջական ճառագայթների տակ կամ խոնավ տեղում:
- Մի թողեք լուսանկարների թուղթը այնպիսի վայրում, որտեղ ջերմաստիճանը կամ խոնավությունը չեն համապատասխանում փաթեթի վրա նշված պայմաններին: Դա կարող է անդրադառնալ տպված լուսանկարի որակի վրա:

ԿԱՊՈՒՅՏ SMART SHEET®-Ի ՄԱՍԻՆ

- Լուսանկարների թղթի յուրաքանչյուր փաթեթ պարունակում է 10 թուղթ և 1 կապույտ SMART SHEET®:
- Տպման լավագույն որակ ստանալու համար կապույտ SMART SHEET®-ը և լուսանկարների թուղթը լիցքավորեք միևնույն փաթեթից: Յուրաքանչյուր կապույտ SMART SHEET® հատուկ նախատեսված է այն թղթի փաթեթի համար, որում այն գտնվում է:
- Առաջին տպումից առաջ կապույտ SMART SHEET®-ն ավտոմատ անցնում է սարքի միջով՝ տպիչը մաքրելու և տվյալ փաթեթի թղթերի համար (10 թուղթ) տպման որակը լավարկելու համար:
- Պահպանեք կապույտ SMART SHEET®-ը, այն դեռ նետեք միայն փաթեթում առկա լուսանկարների բոլոր 10 թղթերը տպելուց հետո: Եթե տպման որակը չի գոհացնում, կարող եք կրկին օգտագործել կապույտ SMART SHEET®-ը, եթե թուղթը նույն փաթեթից է: Պարզապես կապույտ SMART SHEET®-ը գծակողը դեպի վար նայող կողմով սահեցրեք լուսանկարների մնացած թղթերի տակ:
- Այլ փաթեթի կապույտ SMART SHEET® օգտագործելիս տպման որակը կարող է նվազել:

ՀՈՍԱՆՔԻ ՄԻԱՑՈՒՄ/ԱՆՁԱՏՈՒՄ

- 1 Սեղմեք և սեղմած պահեք հոսանքի կոճակը, մինչև LED ցուցիչ լույսը միանա:
- 2 Երբ LED ցուցիչն առանց թարթելու վառվում է սպիտակ լույսով, սարքը պատրաստ է օգտագործման:
- 3 Սեղմեք և սեղմած պահեք հոսանքի կոճակը՝ սարքն անջատելու համար:





ԻՆՔՆԱՇԽԱՏ ԱՆՁԱՏՈՒՄ

Սարքը մոտ 3 րոպե (սկզբնադիր) անգործուն մնալու դեպքում ավտոմատ կանջատվի:

- Օգտվողը կարող է վերսկսել սարքի գործարկումը՝ կրկին սեղմելով հոսանքի կոճակը:
- Օգտվողը կարող է ՀԱՎԵԼՎԱԾԻՑ փոխել ժամանակը (3 րոպե / 5 րոպե / 10 րոպե):

ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ և ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՏՊՈՒՄ

- 1 Պահեք սարքը, սևեռեք պատկերի ձեռ ուզած համադրությունը:
- 2 Սեղմեք փականակի կոճակը  և լուսանկարեք: Ելնելով լուսավորության պայմաններից՝ տեսախցիկն ըստ անհրաժեշտության ավտոմատ կգործարկի լուսաբռնկումը:
- 3 Լուսանկարելուց անմիջապես հետո լուսանկարը կտպվի, եթե թուղթը տեղադրված է: Տպելու համար սարքը միաժամանակ կարող է պահել մինչև մոտ 10 պատկեր՝ կախված MicroSD հիշողության քարտի* ծավալից:



* Տպման հերթագրումը կմաքրվի, երբ սարքն անջատվի, և վերագործարկման հնարավորություն չլինի:

* Եթե MicroSD հիշողության քարտ տեղադրված չէ, տպման համար սարքը միաժամանակ կարող է պահել մինչև 5 պատկեր:

- 4 Օգտվողը սարքով կարող է լուսանկարել նույնիսկ թուղթ չլինելու դեպքում, եթե տեղադրված է MicroSD հիշողության քարտը: Լուսանկարները կպահվեն MicroSD հիշողության քարտում:

ԴԻՏԱՆ

Ստացեք պատկերը դիտանում շրջանակի նշագծի միջոցով:



2 x 3



Շրջանակի արտաքին նշագիծ՝ վրա նորմալ լուսանկարելու համար՝ 1 մ-ի վրա - ∞

2 x 3



Շրջանակի ներքին նշագիծ 30 սմ-ից 1մ-ի մոտիկից լուսանկարելու համար

ՍԵԼՖԻ ՌԱՅԵԼԻ

Ստացեք պատկերը Սելֆիի հայելու շրջանակի նշագծի միջոցով:



2 x 3



Կիզակետման
հեռավորություն՝ 50 սմ-ի վրա:



ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼՈՒ ՌԵԺԻՄՆԵՐ


Սարքի վերևում գտնվող շարժական անջատիչի միջոցով կարող եք ընտրել տեսախցիկի տարբեր ռեժիմները՝ տարբեր սցենարների համար:



| Ռեժիմ | Բնապատկեր | Դիմանկար | Սելֆի |
|---|--|---|--|
| Նշաններ | | | |
| Էքսպոզիցիայի չափում (չափում մարդու դեմք հայտնաբերելիս) | Կենտրոնակշիռ միջինացում (կենտրոնակշիռ միջինացման պահում) | Կենտրոնակշիռ միջինացում (դեմքի հատվածի կշռում) | Կենտրոնակշիռ միջինացում (դեմքի հատվածի կշռում) |
| Կիզակետում (կիզակետում մարդու դեմք հայտնաբերելիս) | Կենտրոնացում (կենտրոնացված դիրքի պահպանում) | Կենտրոնացում (մարդու դեմքի կիզակետում) | Կենտրոնացում (մարդու դեմքի կիզակետում) |
| Լուսաբռնկում | Լուսաբռնկումը ԱՆՁԱՏՎԱԾ Է, օղակաձև լույսերն ԱՆՁԱՏՎԱԾ ԵՆ | Լուսաբռնկումը ԱՎՏՈՄԱՏ Է, օղակաձև լույսերն ԱՆՁԱՏՎԱԾ ԵՆ | Լուսաբռնկումը ՄԻԱՑՎԱԾ Է, օղակաձև լույսերը ՄԻԱՑՎԱԾ ԵՆ |

Ծանոթագրություն. եթե պատրաստվում եք սելֆի անել, ոսպնյակի շուրջը օղակաձև դասավորված 8 LED լույսերը հավասարաչափ կլուսավորեն ձեր դեմքը: Դրանք կրճատում են ստվերը և թույլ են տալիս ընդհանուր գեղեցիկ լուսանկարել սեփական դեմքը և հավասարաչափ պայծառություն են հաղորդում ամբողջ լուսանկարին:

* Օղակաձև դասավորված լույսերի էֆեկտիվ հեռավորություն՝ 30 սմ – 60 սմ




ՉՏԻՉ և ՇՐՋԱՆԱԿԻ ԿՈՃԱԿՆԵՐ

Չեշտությամբ գտիչ կամ շրջանակ ավելացրեք ձեր լուսանկարներին հենց տեսախցիկից:



ՉՏԻՉ

Օգտվողը կարող է սև ու սպիտակ կամ պայծառ գտիչ ավելացնել լուսանկարին՝ նախքան լուսանկարելը սեղմելով  կոճակը:



Առանց գտիչի առանց շրջանակի






Սև ու սպիտակ գտիչով առանց շրջանակի




Պայծառ գտիչով առանց շրջանակի

ՇՐՋԱՆԱԿ


- Օգտվողը կարող է շրջանակ ավելացնել լուսանկարին՝ նախքան լուսանկարելը սեղմելով  կոճակը:
- Օգտվողը կարող է հարմարեցնել շրջանակը Canon Mini Print հավելվածի միջոցով՝ կապակցելով սարքը համատեղելի սմարթֆոնի հետ (սպիտակ շրջանակը սկզբնադիր է):

- 1 Բացեք գլխավոր էկրանը, ապա սեղմեք «Անցե՛ք անլար ռեժիմի» --> «Վայրկենական լուսանկար»:
- 2 Շրջանակը փոփոխելու համար սեղմեք  Setting:
- 3 Ընտրեք ձեր ուզած շրջանակի տեսակը և գույնը, ապա սեղմեք  հաստատելու համար:






ՈՒՂԻՂ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ

Օգտվողը կարող է հավելվածի միջոցով հեռավար կառավարել սարքը և լուսանկարել: Բացեք գլխավոր էկրանը՝ ուղիղ լուսանկարման էջ անցնելու համար:






ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ ԵՎ ՏՊՈՒՄ


Լուսանկարելու համար սեղմեք : Եվ տպելը հաստատելու համար սեղմեք  :




ԺԱՄԱՆԱԿԱԶԱՓ


Ակնթարթորեն լուսանկարելու համար սեղմեք : Սեղմեք  և ընտրեք 3 վայրկյան/5 վայրկյան/10 վայրկյան (սկզբնադիր՝ ԱՆՁԱՏՎԱԾ), հետհաշվարկն սկսելու համար սեղմեք :

- Սելֆիի հայելու մոտ տեղադրված LED լույսը ցույց կտա, որ ժամաչափը միացված է:






ԴԻՏԱՓՈՒՆՈՒՄ

Փոքրացնելու համար սեղմեք :















ԴԻՐՔ






Հորիզոնական և ուղղաձիգ դիրքերի միջև փոխարկելու համար սեղմեք 







LED ՑՈՒՑԻՉ

| Կարգավիճակ | Ռեժիմի LED լույս | Կարգավիճակի LED լույս |
|--|---|---|
| Միացված | Սեղմել և սեղմած պահել հոսանքի կոճակը |  >  Սպիտակ Սպիտակ |
| Սպասման ռեժիմ | Սարքը միացնելուց հետո |  Սպիտակ |
| Անջատված | Սեղմել և սեղմած պահել հոսանքի կոճակը |  Անջատված |
| Կապույտ SMART SHEET®-ի սխալ | Երբ սարքը հայտնաբերում է, որ սխալ կապույտ SMART SHEET® է տեղադրվել, կամ այլ կապույտ SMART SHEET®-ի սխալ |  Կապույտ |
| Կապույտ SMART SHEET®-ի ընդունում | Երբ սարքը ընդունում է կապույտ SMART SHEET®-ը |  Սպիտակ |
| Թուղթը լիցքավորված չէ, SD քարտը տեղադրված չէ | Եթե սարքը լիցքավորված չէ թղթով, և SD քարտ տեղադրված չէ, սարքը թույլ չի տա լուսանկարել: |  Կարմիր |
| Թղթի խցանում / Կափարիչը բաց է | Երբ թուղթը խցանվել է, կամ տպիչի կափարիչը բաց է |  Կարմիր |
| Պատրաստում տպելուն | Նախապատրաստում է տպելուն |  Սպիտակ |
| Լուսանկարի տպում | Երբ սարքը լուսանկար է տպում |  Դեղին->Մուգ վարդագույն->Երկնագույն>Սպիտակ (ցիկլային) |
| MS ռեժիմ (մեծածավալ արտաքին պահեստի ռեժիմ) | Սարքը միացված է համակարգչին |  Մուգ վարդագույն |
| MicroSD քարտի սխալ | Հնարավոր չէ տվյալները գրել MicroSD հիշողության քարտի վրա |  Մուգ վարդագույն |

LED ՑՈՒՑԻՉ

| Կարգավիճակ | Ռեժիմի LED լույս | Կարգավիճակի LED լույս |
|--------------------------------------|---|---|
| Խիստ բարձր ջերմաստիճան | Երբ սարքը չափազանց շատ է տաքացել |  Կարմիր (երբ վերականգնվում է նորմալ ջերմաստիճանը) |
| Խիստ ցածր ջերմաստիճան | Երբ սարքը չափազանց շատ է սառել |  Երկնագույն (երբ վերականգնվում է նորմալ ջերմաստիճանը) |
| Տպիչի գլխիկի հովացում | Ստուգում է տպիչի գլխիկի ջերմաստիճանը և հովացնում է այն նախքան տպելը |  Երկնագույն |
| Մարտկոցի լիցքավորման սպառում | Երբ մարտկոցի լիցքը հասել է 20%-ի |  Սպիտակ > Կարմիր (ցիկլային) |
| Ներկառուցված ծրագրի թարմացում | Երբ սարքը թարմացնում է ներկառուցված ծրագիրը |  Սպիտակ |

ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԿՈՒՄ

| Կարգավիճակ | LED ցուցիչ | Գործողություններ |
|----------------------------------|--|--|
| MicroSD քարտի սխալ |  Մուգ վարդագույն | <ul style="list-style-type: none"> • Համոզվեք, որ MicroSD հիշողության քարտը ճիշտ է տեղադրված • Համոզվեք, որ MicroSD հիշողության քարտը լցված չէ • Համոզվեք, որ MicroSD հիշողության քարտը վնասված չէ • Համոզվեք, որ MicroSD հիշողության քարտը համատեղելի է |
| Թղթի մատակարարումը չի հաջողվել |  Կարմիր | <ul style="list-style-type: none"> • Բացեք թղթի բաժնի կափարիչը և համոզվեք, որ Canon ZINK® լուսանկարների թուղթը տեղադրված է |
| Թղթի խցանում |  Կարմիր | <ul style="list-style-type: none"> • Սարքը անջատեք և կրկին միացրեք, լուսանկարների թուղթն ավտոմատ կերպով դուրս կգա |
| Տպիչի կափարիչը ճիշտ փակված չէ |  Կարմիր | <ul style="list-style-type: none"> • Ճիշտ փակեք տպիչի կափարիչը |
| Կապակցում | ՉԿԱ | <ul style="list-style-type: none"> • Համոզվեք, որ սմարթֆոնի bluetooth կապակցումը ճիշտ է արված • Համոզվեք, որ հավելվածում սարքի ընտրությունը ճիշտ է • Համոզվեք, որ սմարթֆոնի ԳՀ-ն համատեղելի է և թարմացված |
| Հեռակառավարման խափանում | ՉԿԱ | <ul style="list-style-type: none"> • Համոզվեք, որ սարքը կապակցված է հավելվածին • Համոզվեք, որ հավելվածը և ներկառուցված ծրագիրը թարմացված են |
| Անհատականացված ձայնը չի աշխատում | ՉԿԱ | <ul style="list-style-type: none"> • Համոզվեք, որ սարքը կապակցված է հավելվածին • Համոզվեք, որ հավելվածը և ներկառուցված ծրագիրը թարմացված են |
| Սարքը չի աշխատում | ՉԿԱ | <ul style="list-style-type: none"> • Համոզվեք, որ մարտկոցի լիցքավորումը սպառման եզրին չէ: Հակառակ դեպքում լիցքավորեք սարքը |



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

| | |
|---|--|
| Տպման տեխնոլոգիա | ZINK® |
| Տպման տարլուծում | 314 x 600 dpi (կետ դյույմի վրա) |
| Տպման արագություն | Մոտ 50 վայրկյան. շարժիչը սկսում է աշխատել և կանգ է առնում 25° C սենյակային ջերմաստիճանում |
| Լուսանկարի կողմերի հարաբերակցություն | 2" x 3" |
| Համատեղելի թղթեր | Canon լուսանկարների թուղթ. ZP-2030-20 (20 թերթ) ZP-2030-50 (50 թերթ) ZP-2030-2C-20 (20 թերթ) / 2" x 3" / ինքնակաշուն թուղթ |
| Թղթի տարողունակություն | Մինչև 10 լուսանկարի թուղթ + 1 կապույտ SMART SHEET® |
| Լուսանկարի տարլուծում | 8 ՄՓ |
| Կիզակետային հեռավորություն | 2,6 մմ |
| Բացվածք | f 2.2 |
| Կիզակետման տիրույթ | 30 սմ - ∞ |
| Զգայունություն | Ինքնաշխատ (ISO 100 - 1600) |
| Լուսաբռնկում | ԱՅՈ (ինքնաշխատ) |
| Լուսաբռնկման տիրույթ | 0,5մ - 1մ |
| Հիշողության քարտ | MicroSD քարտ, մինչև 256 ԳԲ |
| Լուսանկարի ձևաչափ | JPEG |
| Հոսանքի աղբյուր | Ներկառուցված վերալիցքավորվող լիթիումապոլիմերային մարտկոց 700 մԱԺ, 7,4 Վ== |
| Լիցքավորման արագությունը | Մոտավորապես 120 րոպե (լրիվ լիցքավորվելու համար) |
| Հոսանքի հարմարիչ | Ելքային հոսանք՝ 1 Ա (սվազ.) Լարում՝ 5 Վ== |
| Միջավայրային պարամետրեր | <ul style="list-style-type: none"> - Տպման գործընթացի, լիցքավորման և պահպանման համար խորհուրդ տրվող ջերմաստիճան՝ 15° - 32° C - Տպման գործընթացի, լիցքավորման և պահպանման համար խորհուրդ տրվող խոնավություն. 40-55% ՀԽ - Աշխատանքային ջերմաստիճան՝ 5° - 40° C - Աշխատանքային խոնավություն՝ <70% ՀԽ |
| Ինքնաշխատ անջատում | 3 րոպե / 5 րոպե / 10 րոպե (կարելի է ընտրել հավելվածից) |
| Չափեր | 121 մմ (L) x 80,3 մմ (Բ) x 22,5 մմ (Խ) |
| Քաշ | 188 գ |
| Համատեղելի ԳՀ (համակարգչի համար) | Windows 7 / 8 / 8.1 / 10 Mac OSX 10.10-10.15 |
| Կապակցելիություն | Bluetooth 5.0 |
| Համատեղելի ԳՀ | iOS 12.0 կամ բարձր և Android 6.0 կամ բարձր |
| Բջջային հավելված | Canon Mini Print |
| Կապակցում լիցքավորման և տվյալների փոխանցման համար | USB 2.0 (միկրո USB) |



Տեխնիկական բոլոր տվյալները ենթակա են փոփոխման առանց ծանուցման

ՏԱՐԲԵՐԱԿ ① ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՈՐՈՆԵՔ «CANON MINI PRINT»

Android™ համակարգի համար՝ Google Play™-ից



iOS® համակարգի համար՝ App Store®-ից




ՏԱՐԲԵՐԱԿ ②

QR ԿՈՂՈՎ. ՍԿԱՆԱԿՈՐԵՔ


«ԱՐԱԳ ՄԵԿՆԱՐԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ» QR ԿՈՂԸ



Android-ի դեպքում



iOS-ի դեպքում



ՏԱՐԲԵՐԱԿ ③



ՁԵՐ ՍԱՐՔԻ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՉՆՆԻՉՈՎ ԲԱՑԵՔ

HTTPS://APP.CANONMINIPRINT.COM/

ՏԱՐԲԵՐԱԿ ④



NFC ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ՝ ՄԻԱՅՆ

ANDROID ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ




Android-ի և iOS-ի զուգավորումը

- 1 Միացրեք տախիչը՝ սեղմելով և սեղմած պահելով հոսանքի կոճակը այնքան, մինչև կարգավիճակի LED լույսը վառվի:
Բացեք շարժական սարքի «Կարգավորումները», ակտիվացրեք Bluetooth-ը և զուգավորեք տախիչի հետ:
- 2 **Չուգավորում.** հպեք վերևի աջ անկյունի պատկերակին և ընտրեք ձեր տախիչը: Կապակցումից հետո պատկերակը կփոխվի՝ ցույց տալու մարտկոցի լիցքավորման մակարդակը:




- ③ **Տպիչի վերականգնում.** զրուգավորված ժամանակ տպիչն ավտոմատ կվերականգնվի հավելվածին: Եթե տպիչը չի կապակցվել հավելվածին, հպեք վերին աջ անկյունի պատկերակին և ցանկից ընտրեք ձեր տպիչը:




Չուգավորումը Android-ի հետ (NFC գործառույթով)

- ① Համոզվեք, որ ձեր շարժական սարքի NFC գործառույթը և Bluetooth-ը միացված են:
- ② Բացեք Canon Mini Print հավելվածը:
- ③ Շարժական սարքը տեղադրեք տպիչի վրա:
- ④ Հետևեք էկրանին հայտնվող հրահանգներին՝ առաջին անգամ զուգավորումը և կապակցումը կատարելու համար: Տպիչն ինքնաշխատորեն կզուգավորվի շարժական սարքի հետ:




! ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տպիչի կարգավիճակի պատկերակ (ցուցադրվում է հավելվածում)



Տպիչը կապակցված չէ





Տպիչը կապակցված է

(ցուցադրվում է մարտկոցի կարգավիճակը)

Տեղեկություններ զուգավորման մասին

- Մեկ տպիչը կարող է զուգավորվել միայն մեկ iOS/Android սարքի հետ:
- Մեկ iOS/Android սարքը կարող է կապակցվել մի քանի տպիչի հետ:
Լրացուցիչ տպիչ զուգավորելու համար բացեք գլխավոր էջը, հպեք վերին աջ անկյունի պատկերակին և սեղմեք «+»՝ տպիչն ընտրելու համար:
- Որոնեք և զուգավորեք «Canon (xx:xx) Ակնթարթային տեսախցիկ» անվանումով տպիչը:
Տպիչի ներսում փակցված պիտակի MACnumber-ի (xx:xx) վերջին 4 թվերը պետք է համընկնեն:
- Bluetooth-ով որոնումը և փոխանցումը կարող է չհաջողվել՝ կախված միջավայրից:
Ստուգեք ձեր շարժական սարքի Bluetooth-ի կարգավորումը և փորձեք նորից:



MAC: xx:xx:xx:xx:xx:xx

ԳԼԽԱՎՈՐ ԷԿՐԱՆ

Հիմնական ընտրացանկ

Տպման հերթագրում

Տպիչի կարգավիճակ



Լուսանկարների այբում

Կոլաժ

Նախակտրված կաչուկ

Ուղիղ լուսանկարում և տպում microSD քարտով

Սմարթֆոնի տեսախցիկ

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՑԱՆԿ

Հավելվածում ստացվող հաղորդագրությունների դիտում


Մուտքի իրավունք զուգավորված տպիչի տեղեկություններին և կարգավորումներին

Առցանց օգտվողի ձեռնարկի և հաճախակի տրվող հարցերի դիտում

Լուսանկարների թղթի գնում առցանց խանութից

Հավելվածի տարբերակի ստուգում, ծանոթացում Օգտվողի համաձայնագրին և Գաղտնիության դրույթին

Կապակցված տպիչ. օգտվողը ցանկացած պահի կարող է դիտել տպիչի մասին տեղեկությունը, հարմարեցնել տպիչի անվանումը, ձայները և ավտոմատ անջատման ժամանակը:



Առցանց այբումներ* (Մուտք / Ելք)

Facebook

Instagram

Google Լուսանկարներ

Կախված ձեր սարքից և տարածաշրջանից՝ հավելվածի աշխատանքը, գործառույթները և հասանելի Առցանց այբումները կարող են տարբեր լինել:

* Պահանջվում է կապակցում համացանցին: Օգտագործելու համար պահանջվում են սոցիալական ցանցերի կամ ամպային ակտիվ հաշիվ(ներ):


ՏՊԻՉԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Երբ տպիչը կապակցված է շարժական սարքին, օգտվողը կարող է հարմարեցնել տպիչի անվանումը, ձայները և ավտոմատ անջատման ժամանակը:

Չպեք ≡, ընտրեք ձեր սարքը՝ տպիչի անվանումը, ձայները և ավտոմատ անջատման ժամանակը հավելվածի միջոցով հարմարեցնելու համար:

ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄ

Օգտվողը կարող է ըստ ցանկության հարմարեցնել տպիչի անվանումը:





ՁԱՅՆԵՐ

Օգտվողը կարող է հարմարեցնել «Միացնել», «Անջատել» և «Փակասակ» ձայնային էֆեկտները:



Օգտվողը կարող է ձայնագրել 3 ձայնանիշք՝ որպես տպիչի ձայն:

Չպեք ցանկալի ձայնանիշքի պատկերակին՝ ձայնը կիրառելու համար:




Ձայնագրումն սկսելու համար հպեք ցանկալի ձայնանիշքի պատկերակին :

Ձայնային նվագարկման համար սեղմեք , և նվագարկվող ձայնն ավտոմատ կընտրվի:





ԻՆՔՆԱՇԽԱՏ ԱՆՁԱՏՈՒՄ



Չպեք՝ ավտոմատ անջատման ժամանակը փոխելու համար:




ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԱԼԲՈՄ

Լուսանկարների ալբոմում կարող եք լուսանկարները զննել՝ գտելով ըստ պանակների և որոնել ըստ ամսաթվի:


- ① Լուսանկարների ալբոմը դիտելու համար գլխավոր էկրանին հպեք :
- ② Լուսանկար ընտրելուց հետո կարող եք տպել, խմբագրել, համոզագործել կամ պահել այն:
- ③ Տպելու համար հպեք :



Բոլոր լուսանկարները - Պատկերասրահ



Չտում ըստ պանակի



Որոնում ըստ ամսաթվի


Կարող եք զննել նաև առցանց ալբոմներում:

ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄԸ MINI PRINT ՅԱՎԵԼՎԱԾԻՆ

ՁԵՐ ՍԱՐՔԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՏԻՑ ԿԱՄ ՏԵՍԱԽՑԻԿԻ ԿԱՏԱԼՈԳԻՑ ՈՐԵՎԷ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՈՒՂԱՐԿԵԸ CANON MINI PRINT ՅԱՎԵԼՎԱԾԻՆ:


Android-ի դեպքում

- ① Ձեր սարքի պատկերասրահից ընտրեք որևէ լուսանկար և հպեք համոզագործելու կոճակը:
- ② Յպեք Mini Print պատկերակին, որպեսզի լուսանկարն ուղարկվի հավելվածին, և դուք կարողանաք խմբագրել ու տպել այն:



iOS-ի դեպքում


- ① Ձեր սարքի պատկերասրահից ընտրեք որևէ լուսանկար և հպեք համոզագործելու կոճակը:
- ② **ՏԱՐԲԵՐԱԿ Ա.** հպեք «Բացել Mini Print հավելվածում», որպեսզի լուսանկարն ուղարկվի հավելվածի խմբագրման էկրանին, որտեղ կարող եք փոփոխել և տպել այն:
- ③ **ՏԱՐԲԵՐԱԿ Բ.** հպեք «Տպել Canon-ով», որպեսզի լուսանկարն ուղարկվի անմիջապես տպման հերթագրմանը:



ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒՄ


Պատկերը կարող եք հարմարեցնել խմբագրումների, օրինակ, գտիչների, կաչուկների, տեքստի և այլ էֆեկտների միջոցով:

- ① Չպեք Էկրանի ստորին գոտում գտնվող պատկերակներին:
- ② Չարմարեցրեք, ինչպես կամենում եք:
- ③ Այդ Էկրանից դուրս գալուց առաջ չմոռանաք պահել, համոզագործել կամ տպել ձեր փոփոխությունները:



ԽՃԱՆԿԱՐԻ ՏՊՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Խճանկարի տպում գործառույթի միջոցով կարող եք մեկ լուսանկարը տպել մի քանի թերթի վրա, ինչը հնարավորություն կտա խճանկարով ավելի մեծ պատկեր տպել:

- 1 Երբ ամեն ինչ պատրաստ լինի տպելուն, հպեք  պատկերակին և հպեք խճանկարի տպման 2 x 2 կամ 3 x 3 տարբերակներին (կցուցադրվեն գծեր, որոնք ցույց կտան, թե ինչպես է ձեր պատկերը բաժանվելու):



- 2 Խճանկարը տպելու համար հպեք , ապա համակցեք խճանկարի առանձին մասերը՝ ստեղծելով մեծ չափի խճանկար:




ԿՈՆԱԺԱՅԻՆ ՏՊՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ




Կոլաժային տպում գործառույթի միջոցով կարող եք տպել մինչև 6 լուսանկար՝ մեկ 2x3 չափսի թղթի վրա:

① Գլխավոր էկրանին հպեք :






② Հպեք լուսանկարներին՝ կոլաժ ստեղծելու համար: Կցուցադրվի ընտրված լուսանկարների քանակը:


③ Կարող եք ընտրել մեկ այլ ձևանմուշ՝ սեղմելով  կամ պատկերի նախատեսքի վրա մատն աջից ձախ սահեցնելով: Կարող եք նաև ընդլայնել նախատեսքը՝ մատը սահեցնելով ալբոմի գոտու վրայով դեպի ներքև:




Տպվող օրինակների քանակ

④ Ընտրեք ձեր ուզած ձևանմուշը և գնացեք խմբագրման էջ՝ սեղմելով :

- ⑤ Խմբագրեք և կարգաբերեք կոլաժի նկարները ձեր ցանկությամբ, ապա հպեք տպելու,  համոզագործելու կամ  պահելու համար:



Կոլաժ (ամբողջական նկարի խմբագրում)




Կոլաժ (առանձին նկարի խմբագրում)



ՆԱԽԱԿՏՐՎԱԾ ԿՊՉՈՒԿԻ ՏՊՈՒՄ


Օգտագործեք նախակտրված կաչուկի տպման գործառույթը՝ շրջանաձև կաչուկի լուսանկարը/տեքստը տպելու համար:




① Գլխավոր էկրանին հաեք :




② Զպեք լուսանկարներին՝ դրանք շրջանաձև կաչուկին ավելացնելու համար:




③ Նախակտրված կաչուկը խմբագրելու համար սեղմեք :




- ④ Կարգաբերեք կաչուկի նկարները ձեր ցանկությամբ, ապա հպեք  տպելու,  համոզագործելու կամ  պահելու համար:



Նախակտրված կաչուկ
(ամբողջական նկարի
խմբագրում)

 **Aa**  
Չեռնաշերտ Տեքստ Կաչուկներ Նկարում






Նախակտրված կաչուկ
(առանձին նկարի
խմբագրում)

  **Aa**  
Կարգաբերում Չտիչներ Տեքստ

  
Պտտում Փոխարինում Կրկնօրինակում

ՍՄԱՐՔՖՈՆԻ ՏԵՍԱԽՅԻԿ

- ① Ձեր սմարթֆոնի տեսախցիկով լուսանկարելու համար գլխավոր էկրանին հպեք  (ընտրովի, էֆեկտներով լուսանկար նկարելու համար հպեք ներքևի պատկերակներին):
- ② Լուսանկարելուց հետո կարող եք տպել, խմբագրել, համօգտագործել կամ պահել լուսանկարը:
- ③ Տպելու համար հպեք  :



Յետ

Լուսարձնկում

Ժամանակաչափ



Պայծառության գոտի


Դիմացի / հետևի տեսախցիկ

Շրջանակներ


Կարգաբերում

ԻՆՉՊԵՍ ՏՊԵԼ ZOEMINI S2 MicroSD ԲԱՐՏԻՑ

- ① Գլխավոր էկրանին հպեք «Անցե՛ք անլար ռեժիմի», ապա հպեք «Տպել microSD քարտով»:
- ② Հպեք լուսանկարին, որը ցանկանում եք տպել, ապա սեղմեք  :
- ③ Կարող եք microSD քարտում նաև ջնջել լուսանկարը՝ սեղմելով :




Տպել





Չնջել


ՏՊՄԱՆ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ

Տպման հերթագրումը կառավարելու համար հպեք  :



Տպելու հերթի էջում կարող եք

- ① Հպել  լուսանկարը տպելու հերթից ջնջելու համար
- ② Տպելու հերթականությունը փոխելու համար հպեք լուսանկարին, հպած պահեք այն և տեղափոխեք հերթը:
- ③ Հպեք առանձին լուսանկարին, որը չեք ցանկանում տպել: Կցուցադրվի ընդհատման նշան:
- ④ Հպեք  լուսանկարը կրկնօրինակելու համար



Ծանոթագրությունն տպման հերթագրման մասին. Եթե տպելու ուղարկելու պահին տպիչը միացված և կապակցված չէ, պատկերը կպահվի տպման հերթում: Տպումը վերսկսելու համար պարզապես միացրեք տպիչը և կրկին կապակցեք այն: Ձեզ կցուցադրվի հարցում, թե արդյոք ցանկանում եք տպել հերթում գտնվող պատկերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Տպված պատկերը կարող է տարբերվել բնօրինակ պատկերից, քանի որ շարժական սարքի վրա գույնը արտապատկերելու համար օգտագործվող «Էկրանի տեխնոլոգիան» տարբերվում է գույնը թղթի վրա արտապատկերելու համար օգտագործվող «տպման տեխնոլոգիայից» (ջերմային փոխանցմամբ տպում):
- Տպելու ընթացքում կամ խցանման դեպքում թուղթը ուժով չքաշեք:
- Տպելու ընթացքում կափարիչը մի բացեք: Դա կարող է ազդել տպման որակի վրա:
- Եթե տպիչը ենթարկվի վիբրացիայի կամ ցնցվի, դա նույնպես կարող է ազդել լուսանկարի տպման որակի վրա:



Եթե սարքը ճիշտ չի աշխատում, դիմեք ձեր ներկայացուցչին, որից գնել եք այս ապրանքը կամ Canon-ի սպասարկման և աջակցման կենտրոնին՝ www.canon-europe.com/support հղումով

SMART SHEET, ZINK Technology և ZINK ապրանքանիշները հանդիսանում են ZINK Holdings LLC-ի սեփականությունը: Օգտագործվում են լիցենզիայի հիման վրա: Apple-ը, Apple-ի տարբերանշանը, iPad-ը, iPad Air-ը, iPad Pro-ն և iPhone-ը հանդիսանում են Apple Inc. ընկերության գրանցված ապրանքանիշներ Միացյալ Նահանգներում և այլ երկրներում: App Store-ը Apple Inc. ընկերության ծառայության նշանն է: iOS-ը Cisco ընկերության ապրանքանիշն է կամ գրանցված ապրանքանիշը Միացյալ Նահանգներում և այլ երկրներում և օգտագործվում է լիցենզիայի հիման վրա: Android-ը, Google Play-ը և Google Play-ի տարբերանշանը Google LLC ընկերության ապրանքանիշներն են: Bluetooth-ը Bluetooth SIG ընկերության գրանցված ապրանքանիշն է: Wi-Fi-ը Wi-Fi Alliance ընկերության գրանցված ապրանքանիշն է: Մնացած բոլոր երրորդ կողմերի ապրանքների անվանումները, առևտրային անվանումները և տարբերանշանները իրենց համապատասխան սեփականատերերի ապրանքանիշներն են: